



## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Հայաստան)<sup>1</sup>

մի կողմից,

և

Եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Եվրոպական  
միության (այսուհետ՝ Միություն) անունից՝

մյուս կողմից,

այսուհետ՝ Կողմեր,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ «Գործընկերության և համագործակցության մասին  
Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և մյուս կողմից՝ Եվրոպական  
համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև» համաձայնագրի՝  
«Համայնքի ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության  
նպատակով ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական համայնքի և  
Հայաստանի Հանրապետության միջև շրջանակային համաձայնագրի  
վերաբերյալ» արձանագրությամբ<sup>1</sup>, որը ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի

---

<sup>1</sup> ՊՏ L 174, 13.6.2014թ., էջ 3:

17-ին սահմանվում են Միության ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության համար ընդհանուր սկզբունքները: Սույն միջազգային համաձայնագիրը կազմվում է նույն ձևով և ունի նույն իրավական ուժը, ինչ «Համայնքային ծրագրերին մասնակցության ժամկետների և պայմանների վերաբերյալ» արձանագրության 5-րդ հոդվածում նշված Փոխըմբռնման հուշագիրը:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ մշակութային բազմազանությանն աջակցելու և մշակութային և ստեղծագործ ոլորտների մրցակցությունը խթանելու համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագիրը ստեղծվել է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2021/818 (ԵՄ) կանոնակարգով (այսուհետ՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգ):

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ համաձայն Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 9(2) հոդվածի, որը վերաբերում է երրորդ երկրների հետ ասոցացմանը, ասոցացման կոնկրետ ժամկետներն ու պայմանները պետք է որոշվեն Միության և Ասոցացված երկրի միջև միջազգային համաձայնագրով:

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ, որ Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի նպատակներն ու ընդհանուր սկզբունքները էական են մշակութային, ժողովրդավարական, բնապահպանական, սոցիալական և տնտեսական հարցերի տեսանկյունից և հատկապես կարևոր են մեր հասարակությունների և մշակութային հատվածների համար, որոնք բախվում են գլոբալիզացիայի, կլիմայի փոփոխության և թվայնացման ներկա մարտահրավերներին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ այս քաղաքականության նպատակներին, որոնք արտացոլվել են նաև «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի կոնվենցիայում, հետամուտ է Հայաստանը, որը բախվում է նմանօրինակ մարտահրավերների և կիսում է նույն սկզբունքները, ինչպիսիք են ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ բոլոր մարդկանց հավասարությունը, գենդերային

հավասարությունը և արտահայտվելու ազատությունը, ինչպես նաև գեղարվեստական ազատությունը.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ «Ստեղծագործ Եվրոպա» 2014-2020 ծրագրին մասնակցելու միջոցով մշակույթի, տեսաձայնային տեխնոլոգիաների և զանգվածային լրատվամիջոցների ոլորտում Կողմերի՝ անցյալում ձևավորված ընդհանուր նպատակները, արժեքներն ու ամուր կապերը և Կողմերի ընդհանուր ցանկությունը՝ ծրագրի շրջանակներում իրենց հարաբերություններն ու համագործակցությունն ավելի զարգացնելու, ամրապնդելու, խթանելու և ընդլայնելու համար.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 9(2) հոդվածով սահմանված պայմանները՝ Եվրոպական հարևանության քաղաքականության երկրները կարող են նաև օգտվել միջուլորտային տիրույթի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների տիրույթի որոշ գործողություններին մասնակցելուց հրաժարվելու հնարավորությունից: Այդպիսի պարտավորություններից շեղման նպատակահարմարությունը գնահատելիս ԵՄ-ը հաշվի է առնում մասնավորապես այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են տվյալ երկրում տեսաձայնային շուկայի կոնկրետ իրավիճակը և Եվրոպական տեսաձայնային քաղաքականության մեջ ինտեգրվածության մակարդակը<sup>2</sup>:

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի շուրջ.

## Հոդված 1

### Ասոցացման շրջանակը

1. Հայաստանը որպես ասոցացված երկիր մասնակցում և նպաստում է մշակութային և ստեղծագործ ոլորտներում Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր), ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի

<sup>2</sup> Տե՛ս Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի դեկլարատիվ մասի 34-րդ կետը:

և Խորհրդի ԵՄ 2021/818 կանոնակարգի (այսուհետ՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգ) ամենաարդի տարբերակներով:

2. Հայաստանը մասնակցում է Ծրագրի հետևյալ գործողություններին.
  - ա) մշակութային տիրույթի բոլոր գործողություններին.
  - բ) միջուկրտային տիրույթում ներառված՝ Ծրագրի հարթակի ստեղծմանն օժանդակող գործողություններին.

## **Հոդված 2**

### **«Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի մասնակցության ժամկետներն ու պայմանները**

1. Հայաստանը մասնակցում է Ծրագրին՝ Միության ցանկացած ծրագրին Հայաստանի մասնակցությունը կարգավորող շրջանակային համաձայնագրով սահմանված պայմաններին և սույն Համաձայնագրում նշված ժամկետներին ու պայմաններին, սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված իրավական ակտին, ինչպես նաև Ծրագրի իրականացմանն ու գործողությունների առավել արդիական տարբերակներին վերաբերող ցանկացած այլ կանոնների համապատասխան:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետներով և պայմաններով այլ բան նախատեսված չէ, Հայաստանում հաստատված իրավաբանական անձինք կարող են մասնակցել Ծրագրի գործողություններին՝ Միությունում հիմնադրված իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող համարժեք պայմանների, այդ թվում՝ ԵՄ-ի սահմանափակող միջոցների համաձայն<sup>3</sup>:

---

3 ԵՄ-ի սահմանափակող միջոցներն ընդունվում են «Եվրոպական միության մասին» պայմանագրի 29-րդ հոդվածի կամ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 215-րդ հոդվածի համաձայն:

3. Հայաստանն ազգային մակարդակով պետք է ստեղծի համապատասխան կառույցներ և մեխանիզմներ և Ծրագիրն իրականացնելու նպատակով պետք է ընդունի ազգային համակարգման և գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մյուս միջոցները՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն: Մասնավորապես Հայաստանը պարտավորվում է ստեղծել «Ստեղծագործ Եվրոպա» հարթակ՝ Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 7(1)(դ) հոդվածին և Հանձնաժողովի կողմից տրամադրված ուղեցույցին համապատասխան:

4. Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 24-րդ հոդվածով և դրա ենթախմբերում սահմանված՝ Ստեղծագործ Եվրոպա կոմիտեում Հայաստանի ներկայացուցչության և մասնակցության իրավունքները պետք է համապատասխանեն ասոցացված երկրների նկատմամբ կիրառելի իրավունքներին: Հետևաբար Հայաստանի ներկայացուցիչները պետք է ունենան որպես դիտորդ առանց ծայնի իրավունքի մասնակցելու իրավունք Ծրագրի իրականացման մշտադիտարկման համար պատասխանատու Ստեղծագործ Եվրոպա կոմիտեում, որի համար Հայաստանը ֆինանսական հատկացում է կատարում, և այն հարցերով, որոնք վերաբերում են Հայաստանին:

5. Ստեղծագործ Եվրոպա կանոնակարգի 24-րդ հոդվածում նշված Կոմիտեի աշխատանքներին որպես դիտորդներ մասնակցելու կամ Ծրագրի իրականացմանն առնչվող այլ հանդիպումներին մասնակցելու նպատակով Հայաստանի ներկայացուցիչների և փորձագետների կողմից կատարված ճանապարհածախսն ու կեցության ծախսը հատուցվում են Հանձնաժողովի կողմից նույն հիմքով և այն ընթացակարգերին համապատասխան, որոնք գործում են Եվրոպական միության անդամ պետությունների ներկայացուցիչների համար:

6. Կողմերը գործող դրույթների շրջանակներում գործադրում են բոլոր ջանքերը՝ սույն Համաձայնագրով կարգավորվող գործողություններին մասնակցող արվեստագետների, լրագրողների և մասնագետների ազատ

տեղաշարժին և կացությանը, ինչպես նաև այդ գործողություններում օգտագործելու համար նախատեսված ապրանքների և ծառայությունների միջսահմանային տեղաշարժին նպաստելու համար:

7. Հայաստանը նպատակահարմար լինելու դեպքում ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ Հայաստանում գնված կամ Հայաստան ներմուծված ապրանքներն ու ծառայությունները, որոնք մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսավորվում են սույն համաձայնագրին համապատասխան գործողությունների իրականացման նպատակով կնքված դրամաշնորհային Համաձայնագրերի և (կամ) պայմանագրերի համաձայն, ազատվեն Հայաստանում կիրառվող մաքսատուրքերից, ներմուծման տուրքերից և ԱԱՀ-ից:

8. Հայաստանի կողմից անգլերենն օգտագործվում է հայտերի, պայմանագրերի և հաշվետվությունների, ինչպես նաև Ծրագրի այլ վարչական հարցերի հետ կապված ընթացակարգերի առնչությամբ Հանձնաժողովի հետ կապ հաստատելու համար:

### **Հոդված 3**

#### **Ֆինանսական հատկացումը**

1. Հայաստանի կամ Հայաստանի իրավաբանական անձանց մասնակցությունը Ծրագրին պայմանավորված է Ծրագրին ուղղված Հայաստանի ֆինանսական հատկացմամբ և Միության ընդհանուր բյուջեի (այսուհետ՝ Միության բյուջե) շրջանակներում կառավարման, իրականացման և գործառնության հետ կապված ծախսերով:

2. Ֆինանսական հատկացումը պետք է լինի հետևյալի տեսքով՝

ա) գործառնական հատկացում. և

բ) մասնակցության վճար:

3. Ֆինանսական հատկացումը պետք է լինի տարեկան միանվագ վճարի տեսքով՝ ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավերին համապատասխան, և տրամադրվի հրավերի օրվանից ոչ ուշ, քան 45 օր հետո:

4. Գործառնական հատկացումն ուղղվում է Ծրագրի գործառնական և օժանդակ ծախսերին և համարվում է լրացուցիչ հատկացում Ծրագրի համար վերջնականապես հաստատված ինչպես հանձնառությունների մասով՝ կապված Միության բյուջե մուտքագրված գումարների հետ, այնպես էլ վճարման մասով լրացուցիչ հատկացումներ:

5. Գործառնական հատկացումը հիմնված է շուկայական արժեքին համարժեք հաշվարկված Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և շուկայական արժեքին համարժեք հաշվարկված Միության ՀՆԱ-ի հարաբերակցությամբ սահմանված հատկացման բազայի վրա: Շուկայական արժեքին համարժեք կիրառվող ՀՆԱ-ն որոշվում է Միության կողմից՝ հիմք ընդունելով հատկացման հաշվետու տարվան նախորդող տարում բյուջեի հաշվարկների համար հասանելի ամենավերջին վիճակագրական տվյալները: Սույն հատկացման բազայում արվող ճշգրտումները սահմանված են I հավելվածով:

6. Սկզբնական գործառնական հատկացումը հաշվարկվում է՝ ճշգրտված հատկացման բազան կիրառելով Ծրագրի ֆինանսավորման նպատակով տվյալ տարվա համար վերջնականապես հաստատված Միության բյուջե մուտքագրված հանձնառությունների մասով հատկացումների նկատմամբ:

7. Մասնակցության վճարը կազմում է 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան հաշվարկված սկզբնական գործառնական հատկացման 4 տոկոսը և իրականացվում է աստիճանաբար, ինչպես սահմանված է I հավելվածով:

8. Միությունը Հայաստանին տրամադրում է իր ֆինանսական մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն, որը ներառված է Ծրագրի մասով Միության բյուջետային և գործադիր մարմիններին տրամադրվող՝

բյուջեին, հաշվապահությանը, կատարողականին և գնահատմանն առնչվող տեղեկատվության մեջ: Այդ տեղեկատվությունը տրամադրվում է՝ պատշաճորեն հաշվի առնելով Հայաստանի և Միության գաղտնիության և տվյալների պաշտպանության կանոնները, և այն չպետք է սահմանափակի այն տեղեկությունները, որոնք Հայաստանն իրավունք ունի ստանալու II հավելվածի համաձայն:

9. Հայաստանի կողմից արվող բոլոր հատկացումները կամ Միության կողմից վճարումները, ինչպես նաև վճարման ենթակա կամ ստացվող գումարների հաշվարկը կատարվում է եվրոյով:

#### **Հոդված 4**

#### **Մշտադիտարկում, գնահատում և հաշվետվությունների ներկայացում**

1. Չսահմանափակելով Հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) և Եվրոպական միության հաշվիչ դատարանի՝ Ծրագրի մշտադիտարկմանն ու գնահատմանն առնչվող պարտականությունները՝ Հայաստանի մասնակցությունը Ծրագրին պետք է շարունակաբար մշտադիտարկման ենթարկվի գործընկերային սկզբունքի հիման վրա, Հայաստանի և Հանձնաժողովի մասնակցությամբ:

2. Սույն Համաձայնագրով Միության ֆինանսավորման հետ կապված ֆինանսների խելամիտ կառավարման, այդ թվում՝ ֆինանսական հսկողության, բարելավման և Խարդախության դեմ պայքարին ուղղված այլ միջոցառումների վերաբերյալ կանոնները սահմանվում են II հավելվածով:



## Հոդված 5

### Այլ միջազգային համաձայնագրերի հետ կապը

1. Սույն Համաձայնագիրն իրականացվում է 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայով սահմանված՝ Կողմերի պարտավորություններին համապատասխան:

## Հոդված 6

### Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ այդ նպատակով անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին միմյանց ծանուցելու օրը:

2. Սույն Համաձայնագիրը գործում է 2022 թվականի հունվարի 1-ից: Սույն Համաձայնագիրը շարունակում է ուժի մեջ մնալ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է «Ստեղծագործ Եվրոպա» Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր նախագծերն ու գործողությունները, Եվրոպական միության ֆինանսական շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, ինչպես նաև կողմերի միջև սույն Համաձայնագրի իրականացումից բխող բոլոր ֆինանսական պարտավորություններն ավարտելու համար:

3. Եթե Հայաստանը Միության անունից գործող Հանձնաժողովին ծանուցում է, որ չի ավարտել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իր ներքին ընթացակարգերը, ապա սույն համաձայնագիրը դադարում է գործել Հանձնաժողովի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից,

որը սույն համաձայնագրի նպատակներով համարվում է գործողության դադարման ամսաթիվ:

4. Սույն Համաձայնագրի կիրառումը կարող է կասեցվել Միության նախաձեռնությամբ՝ Հայաստանի կողմից վճարման ենթակա ֆինանսական կամ գործառնական հատկացումները չկատարելու դեպքում, ինչպես նկարագրված է I հավելվածի 3-րդ պարբերության II կետում:

Սույն համաձայնագրի կիրառման կասեցումը, որի մասին Հանձնաժողովը Հայաստանին ծանուցում է պաշտոնապես ներկայացված ծանուցագրի միջոցով, ուժի մեջ է մտնում Հայաստանի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից 30 օր հետո:

Սույն Համաձայնագրի կիրառումը կասեցնելու դեպքում Հայաստանում հիմնադրված իրավաբանական անձինք իրավունք չեն ունենա մասնակցելու կասեցումն ուժի մեջ մտնելու պահին դեռևս չավարտված հաստատման ընթացակարգերին: Հաստատման ընթացակարգը համարվում է ավարտված այն դեպքում, երբ այդ ընթացակարգի արդյունքում ձեռք են բերվել իրավական պարտավորություններ:

Կասեցումը չի ազդում Հայաստանում հիմնադրված իրավաբանական անձանց հետ մինչև կասեցումն ուժի մեջ մտնելն ստանձնած իրավական պարտավորությունների վրա: Սույն Համաձայնագիրը շարունակում է կիրառվել այդպիսի իրավական պարտավորությունների նկատմամբ:

Վճարման ենթակա ֆինանսական կամ գործառնական հատկացման ամբողջ գումարն ստանալուց հետո Հանձնաժողովն այդ մասին անհապաղ ծանուցում է Հայաստանին: Կասեցումը վերացվում է ծանուցումն ստանալուց անմիջապես հետո:

Կասեցումը վերացնելու պահից Հայաստանի իրավաբանական անձինք կրկին իրավասու կլինեն մասնակցել այդ ամսաթվից հետո մեկնարկած հաստատման ընթացակարգերին, ինչպես նաև նախքան այդ ամսաթիվը

մեկնարկած հաստատման ընթացակարգերին, որոնց համար հայտերի ներկայացման ժամկետները չեն լրացել:

5. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ գրավոր ծանուցմամբ տեղեկացնելով այն դադարեցնելու մտադրության մասին:

Դադարեցումն ուժի մեջ է մտնում գրավոր ծանուցումն իր հասցեատիրոջը հասնելու օրվանից երեք օրացուցային ամիս հետո: Սույն Համաձայնագրի նպատակներով դադարեցման ամսաթիվ է համարվում դադարեցումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

6. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագիրը դադարեցվում է 5-րդ կետին համապատասխան, Կողմերը համաձայնում են, որ՝

ա) սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո և նախքան Համաձայնագրի գործողության դադարումը նախաձեռնած նախագծերը, գործողությունները կամ աշխատանքները շարունակվում են մինչև դրանց ավարտը՝ սույն Համաձայնագրով սահմանված պայմանների համաձայն:

բ) տարեկան ֆինանսական հատկացումը N տարվա համար, որի ընթացքում սույն Համաձայնագիրը դադարեցվում է, ամբողջությամբ վճարվում է սույն Համաձայնագրով սահմանված պայմանների համաձայն:

Սույն Համաձայնագրի դադարելու ցանկացած այլ հետևանք Կողմերը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

7. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում նույն ընթացակարգով, որը կիրառվում է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար:

8. Սույն Համաձայնագրի հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը:

Սույն Համաձայնագիրը կազմվում է երկու օրինակից՝ հայերեն և անգլերեն:  
Մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Կատարված է

Երևանում

Բրյուսելում

2022 թվականի սեպտեմբերի 14-ին

2022 թվականի 11 -ին:

Հայաստանի Հանրապետության  
կողմից՝

Եվրոպական միության կողմից՝

Հայաստանի Հանրապետության  
կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարար

Նորարարության, հետազոտության,  
մշակույթի, կրթության և  
երիտասարդության հարցերով  
հանձնակատար

Վահրամ Դումանյան

Մարիա Գաբրիել



- ՀԱՎԵԼՎԱԾ I. «Սրեղծագործ Եվրոպա» ծրագրում Հայաստանի  
Հանրապետության ֆինանսական հարկացումը  
կարգավորող կանոնները (2021-2027)
- ՀԱՎԵԼՎԱԾ II. Ֆինանսների խելամիտ կառավարումը

## Հավելված I

### «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրում Հայաստանի ֆինանսական հատկացումը կարգավորող կանոնները (2021-2027)

#### I. Հայաստանի ֆինանսական հատկացման հաշվարկը

«Ստեղծագործ Եվրոպա» ծրագրում Հայաստանի ֆինանսական հատկացումը սահմանվում է տարեկան կտրվածքով՝ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի կառավարման, իրականացման և գործառնության համար անհրաժեշտ հանձնառությունների մասով հատկացումների գծով յուրաքանչյուր տարի Միության բյուջեում առկա գումարների համամասնությամբ և ի լրումն դրանց:

2. Սույն Համաձայնագրի 3(7) հոդվածում նշված մասնակցության վճարը տրամադրվում է աստիճանաբար՝ հետևյալի համաձայն.

2022՝ 1,0%,

2023՝ 1,5%,

2024՝ 2,0%,

2025՝ 2,5%,

2026՝ 3,0%,

2027՝ 4,0%:

3. Սույն Համաձայնագրի 3(5) հոդվածին համապատասխան՝ Ծրագրին մասնակցության համար Հայաստանի կողմից վճարման ենթակա նախնական գործառնական հատկացումը հաշվարկվում է համապատասխան ֆինանսական տարիների համար՝ կիրառելով ճշգրտված հատկացման բազան:

Ճշգրտված հատկացման բազան պետք է լինի՝

Ճշգրտված հատկացման բազա = հատկացման բազա × գործակից

Հատկացման բազայի ճշգրտման նպատակով վերը նշված հաշվարկի համար գործակիցը պետք է լինի 0,55:

## II. Հայաստանի Ֆինանսական հատկացման վճարումը

1. Հանձնաժողովը հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան ֆինանսական տարում ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավեր անելու պահին, Հայաստանին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) Ծրագրում Հայաստանի մասնակցությանը վերաբերող բյուջետային տողերով ներկայացված՝ տվյալ տարվա համար վերջնականապես հաստատված Միության բյուջեում հանձնառությունների մասով հատկացումները.

բ) սույն Համաձայնագրի 3(7) հոդվածում նշված մասնակցության վճարի չափը.

իր բյուջեի նախագծի հիման վրա Հանձնաժողովը հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան մինչև ֆինանսական տարվա սեպտեմբերի 1-ը, հաջորդող տարվա համար ներկայացնում է «ա» և «բ» ենթակետերում նշված տեղեկատվության նախնական գումարը:

2. Հանձնաժողովը ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ապրիլ ամիսը Հայաստանին տրամադրում է սույն համաձայնագրով նախատեսված իր հատկացմանը համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավեր:

Ֆինանսական միջոցներ հատկացնելու յուրաքանչյուր հրավերով սահմանվում է Հայաստանի համար հատկացման վճարի տրամադրում ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավեր անելուց ոչ ուշ, քան 45 օր հետո: Սույն համաձայնագրի կիրարկման առաջին տարվա համար Հանձնաժողովը սույն

Համաձայնագիրը ստորագրելուց հետո 60 օրվա ընթացքում ներկայացնում է ֆինանսական միջոցներ հատկացնելու հրավեր:

3. Սույն Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանը վճարում է իր ֆինանսական հատկացումը՝ սույն Հավելվածի II կետին համապատասխան: Մինչև վճարման ժամկետը Հայաստանի կողմից վճարում չկատարելու դեպքում Հանձնաժողովը պաշտոնական հիշեցում-նամակ է ուղարկում:

Ֆինանսական հատկացումը վճարելու մասով ցանկացած հետաձգման դեպքում Հայաստանը վճարման ժամկետի օրվանից սկսած ժամկետանց գումարի մասով վճարում է տույժ:

Վճարման ժամկետի օրը չվճարված գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք է համարվում Եվրոպական կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորվող հիմնական գործառնությունների նկատմամբ կիրառվող այն տոկոսադրույքը, ինչպես հրապարակված է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում, որը գործում է վճարման ժամկետի ամսվա առաջին օրացուցային օրվա դրությամբ՝ ավելացրած մեկ և կես տոկոսային կետ:

Այն դեպքում, երբ հատկացման վճարի հետաձգման արդյունքում լինում է այնպես, որ դա կարող է էապես վտանգել Ծրագրի իրականացումը և դրա կառավարումը, պաշտոնական հիշեցում-նամակն ուղարկելուց հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում վճարում չկատարելու դեպքում Հանձնաժողովը կարող է կասեցնել Հայաստանի մասնակցությունը Ծրագրին՝ չսահմանափակելով Միության պարտավորություններն արդեն իսկ կնքված դրամաշնորհային համաձայնագրերի և (կամ) պայմանագրերի մասով՝ կապված անուղղակի գործողությունների իրականացման հետ, որոնց համար ընտրվել է Հայաստանը:



## Հավելված II

### Ֆինանսների խելամիտ կառավարումը

### Ֆինանսական շահերի պաշտպանությունը և բարելավումը

#### Հոդված 1

#### Վերանայում և աուդիտ

1. Եվրոպական միությունն իրավունք ունի Հայաստանում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ այդտեղ հիմնադրված իրավաբանական անձի, որոնք Միությունից ստանում են դրամական միջոցներ, ինչպես նաև Հայաստանում բնակվող կամ հիմնադրված՝ Միության դրամական միջոցների գործածման գործընթացում ներգրավված երրորդ կողմի տարածքում իրականացնել տեխնիկական, գիտական, ֆինանսական կամ այլ տեսակի վերանայում և աուդիտ՝ Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կամ մարմինների համար կիրառվող ակտերին համապատասխան և ինչպես նախատեսված է համապատասխան համաձայնագրերում և (կամ) պայմանագրերում: Այդպիսի վերանայում և աուդիտ կարող է իրականացվել Եվրոպական միության հաստատությունների և մարմինների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հաշվիչ դատարանի գործակալների կամ Եվրոպական հանձնաժողովի պաշտոնատար անձանց կողմից:

2. Եվրոպական միության հաստատությունների և մարմինների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հաշվիչ դատարանի պաշտոնյաները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձինք պետք է ունենան վայրերի, աշխատանքների և փաստաթղթերի (ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակներ) և

աուդիտն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունների, համապատասխան հասանելիություն, այդ թվում՝ աուդիտի ենթարկվող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ աուդիտի ենթարկվող երրորդ անձի կողմից պահվող ցանկացած փաստաթղթի տպագիր/էլեկտրոնային օրինակ և քաղվածքներ կամ թվային կրիչի բովանդակությունը ստանալու իրավունք:

3. Հայաստանը չպետք է խոչընդոտի կամ առաջացնի որևէ հատուկ խոչընդոտ Հայաստանում մուտք գործելու իրավունքի և 2-րդ կետում նշված պաշտոնյաների և այլ անձանց կողմից սույն հոդվածում նշված իրենց պարտականությունները կատարելու նպատակով գրասենյակներ մուտք գործելու համար:

4. Վերանայումն ու աուդիտը հնարավոր է իրականացնել նաև ժամկետը լրանալուց, Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կասեցումից և դադարեցումից հետո, Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կամ մարմինների համար կիրառվող ակտերով սահմանված ժամկետներում և ինչպես նախատեսված է Եվրոպական միության բյուջեն կիրառող և իրավական հանձնառությանն առնչվող համապատասխան համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով, որոնք ստորագրվել են Եվրոպական միության հետ՝ նախքան սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալը կամ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կասեցումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

## **Հոդված 2**

### **Միության ֆինանսական շահերի վրա ազդեցություն ունեցող խախտումների, խարդախությունների և քրեական այլ հանցագործությունների դեմ պայքարը**

1. Եվրոպական հանձնաժողովը և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը (ԽՊԵԳ) իրավասու են Հայաստանի տարածքում իրականացնել վարչական քննություններ, այդ թվում՝ տեղում իրականացվող

ստուգումներ և ուսումնասիրություններ: Այդ վարչական քննություններն իրականացվում են Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կիրառելի ակտերով սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխան:

2. Հայաստանի իրավասու մարմինները ողջամիտ ժամկետներում պետք է Եվրոպական հանձնաժողովին կամ ԽՊԵԳ-ին տեղեկացնեն իրենց հայտնի դարձած և Միության ֆինանսական շահերի վրա ազդող խախտումների, խարդախությունների և այլ ապօրինի գործունեության հետ կապված ցանկացած փաստի կամ կասկածի մասին:

3. Տեղում իրականացվող ստուգումներ ու ուսումնասիրություններ կարող են իրականացվել Հայաստանում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ այդտեղ հիմնադրված իրավաբանական անձի գրասենյակներում, որոնք Միությունից ստանում են դրամական միջոցներ, ինչպես նաև Հայաստանում բնակվող կամ հիմնադրված՝ Միության դրամական միջոցների գործածման գործընթացում ներգրավված երրորդ կողմի գրասենյակներում:

4. Տեղում իրականացվող ստուգումներն ու ուսումնասիրությունները պետք է նախապատրաստվեն և անցկացվեն Եվրոպական հանձնաժողովի կամ ԽՊԵԳ-ի կողմից Հայաստանի այն իրավասու մարմնի հետ սերտ համագործակցությամբ, որը նշանակվում է Հայաստանի կառավարության կողմից: Նշանակված մարմինը պետք է ողջամիտ ժամկետում նախապես տեղեկացվի ստուգումների և ուսումնասիրությունների օբյեկտի, նպատակի և իրավական հիմքի մասին, որպեսզի կարողանա անհրաժեշտ աջակցություն տրամադրել: Այդ նպատակով Հայաստանի իրավասու մարմինները կարող են մասնակցել տեղում իրականացվող ստուգումներին ու ուսումնասիրություններին:

5. Հայաստանի իրավասու մարմինների պահանջով տեղում ստուգումներն ու ուսումնասիրությունները կարող են իրականացվել Եվրոպական հանձնաժողովի կամ ԽՊԵԳ-ի հետ համատեղ:

6. Հանձնաժողովի պաշտոնյաները և ԽՊԵԳ-ի աշխատակիցները տեղում պատշաճ ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով պետք է ունենան պահանջվող գործառույթների վերաբերյալ ամբողջ տեղեկություններին և փաստաթղթերին, այդ թվում՝ համակարգչային տվյալներին հասանելիություն: Նրանք կարող են մասնավորապես պատճենել համապատասխան փաստաթղթերը:

7. Այն դեպքում, երբ ֆիզիկական անձը, իրավաբանական անձը կամ երրորդ կողմն առարկում է տեղում իրականացվող ստուգումների կամ ուսումնասիրությունների դեմ, ապա Հայաստանի իրավասու մարմինները, գործելով ազգային կանոններին և կարգավորումներին համապատասխան, Եվրոպական Հանձնաժողովին կամ ԽՊԵԳ-ին տրամադրում են անհրաժեշտ աջակցություն, որպեսզի նրանք կարողանան կատարել տեղում ստուգումներ կամ ուսումնասիրություններ իրականացնելու իրենց պարտականությունները: Այս աջակցությունը ներառում է համապատասխան կանխարգելիչ միջոցների ձեռնարկում՝ ազգային օրենսդրության համաձայն, մասնավորապես՝ ապացույցների ապահովման մասով:

8. Եվրոպական հանձնաժողովը կամ ԽՊԵԳ-ը Հայաստանի մարմիններին տեղեկացնում է այդպիսի ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների մասին: Մասնավորապես Եվրոպական հանձնաժողովը կամ ԽՊԵԳ-ը հնարավորինս արագ զեկուցում է Հայաստանի իրավասու մարմին խախտումների հետ կապված ցանկացած փաստի կամ կասկածի մասին, որն ինքը նկատել է տեղում իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության ընթացքում:

9. Չխախտելով Հայաստանի քրեական օրենսդրության կիրառումը, Եվրոպական հանձնաժողովը կարող է վարչական միջոցներ և տույժեր կիրառել Հայաստանի իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք մասնակցում են Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխան իրականացվող որևէ ծրագրին կամ գործունեությանը:

10. Սույն հոդվածի պատշաճ իրագործման նպատակով Հայաստանի իրավասու մարմինները և Եվրոպական հանձնաժողովը կամ ԽՊԵԳ-ը կանոնավոր կերպով փոխանակում են տեղեկատվություն և սույն Համաձայնագրի Կողմերից որևէ մեկի խնդրանքով իրականացնում են խորհրդակցություններ:

11. ԽՊԵԳ-ի հետ արդյունավետ համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը հեշտացնելու նպատակով Հայաստանը պետք է նշանակի կոնտակտային անձ:

12. Հայաստանի իրավասու մարմինների և Եվրոպական հանձնաժողովի կամ ԽՊԵԳ-ի միջև տեղեկատվության փոխանակումը պետք է տեղի ունենա՝ հաշվի առնելով գաղտնիությանը ներկայացվող պահանջները: Տեղեկատվության փոխանակման գործընթացում ներառված անձնական տվյալները պետք է պաշտպանվեն կիրառելի կանոններին համապատասխան:

13. Հայաստանի մարմինները պետք է համագործակցեն Եվրոպայի գլխավոր դատախազության հետ՝ թույլատրելով վերջինիս կատարել Եվրոպական միության ֆինանսական շահերի վրա ազդող հանցագործություններ կատարող անձանց և հանցակիցներին քննելու, հետապնդելու և դատապարտելու իրենց պարտականությունները՝ կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

### **Հոդված 3**

#### **Բարելավումը և կատարման ապահովումը**

1. Պետություններից բացի, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար Ծրագրից բխող որևէ պահանջի առնչությամբ Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված՝ նյութական պարտավորություն սահմանող որոշումները ենթակա են կատարման Հայաստանում: Կատարման ակտը կցվում է որոշմանը՝ առանց որևէ այլ ֆորմալ ընթացակարգի, բացի կայացված որոշման իսկության ստուգումը Հայաստանի կառավարության կողմից այդ նպատակով

նշանակված ազգային մարմնի կողմից: Հայաստանի կառավարությունն իր նշանակած ազգային մարմնի մասին տեղեկացնում է Հանձնաժողովին և Եվրոպական միության արդարադատության դատարանին: Սույն հավելվածի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրոպական հանձնաժողովն իրավունք ունի կատարման ենթակա որոշումների վերաբերյալ անմիջականորեն տեղեկացնելու Հայաստանում բնակվող ֆիզիկական անձանց և այդտեղ հիմնադրված իրավաբանական անձանց: Կատարումն իրականացվում է Հայաստանի օրենսդրությանն ու կանոնակարգերին համապատասխան:

2. Միության ծրագրերի, աշխատանքների, գործողությունների կամ նախագծերի առնչությամբ պայմանագրում կամ համաձայնագրում պարունակվող արբիտրաժային դրույթի կիրառման արդյունքում ընդունվող Եվրոպական միության արդարադատության դատարանի վճիռներն ու հրամանները Հայաստանում ենթակա են կատարման նույն կերպ, ինչպես Եվրոպական հանձնաժողովի՝ 1-ին կետում նշված որոշումները:

3. Եվրոպական միության արդարադատության դատարանն իրավասու է վերանայել Հանձնաժողովի՝ 1-ին կետում նշված որոշման օրինականությունը և կասեցնել դրա կատարումը: Այնուամենայնիվ, Հայաստանի դատարաններն իրավասու են քննել որոշումները սահմանված կարգի խախտմամբ կատարելու վերաբերյալ բողոքները:

#### **Հոդված 4**

#### **Հաղորդակցումը և տեղեկություններ փոխանակելը**

Ծրագրի իրականացմանը մասնակցող կամ այդ ծրագրի նկատմամբ հսկողություն ունեցող Եվրոպական միության հաստատություններն ու մարմինները Միությունից դրամական միջոցներ ստացող՝ Հայաստանում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ այդտեղ հիմնադրված իրավաբանական անձի հետ, ինչպես նաև Միության դրամական միջոցների գործածման գործընթացում ներգրավված՝ Հայաստանում բնակվող կամ

հիմնադրված ցանկացած երրորդ կողմի հետ ունեն անմիջական, այդ թվում՝ էլեկտրոնային փոխանակման համակարգերի միջոցով կապ հաստատելու իրավունք: Այդպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ու կողմերը կարող են Միության ծրագրի և դրա իրականացման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայնագրերի նկատմամբ կիրառելի Եվրոպական միության իրավունքով պահանջվող բոլոր համապատասխան տեղեկություններն ու փաստաթղթերը անմիջականորեն ներկայացնել Եվրոպական միության հաստատություններ կամ մարմիններ:



## **AGREEMENT**

### **between the Republic of Armenia and the European Union on the participation of the Republic of Armenia in the Creative Europe Programme (2021 to 2027)**

The Government of the Republic of Armenia (hereinafter referred to as ‘Armenia’),  
on the one part,

and

the European Commission (hereinafter referred to as ‘the Commission’), on behalf of the  
European Union, (hereinafter referred to as ‘the Union’),

on the other part,

hereinafter referred to as ‘the Parties’

WHEREAS a Protocol to the Partnership and Cooperation Agreement between the Republic of Armenia, of the one part, and the European Communities and their Member States, of the other part, on a framework Agreement between the Republic of Armenia and the European Union on the general principles for the participation of the Republic of Armenia in Union programmes<sup>1</sup> has been signed on 17 December 2012 and approved on 20 February 2014 establishing the general principles for the participation of the Republic of Armenia in Union programmes. This International Agreement constitutes and has the same legal effects as a Memorandum of Understanding stated under Article 5 of the Protocol on terms and conditions on participation in Community programmes;

WHEREAS Creative Europe, the Union programme to support cultural diversity and to foster the competitiveness of the cultural and creative sectors, was established by Regulation (EU) 2021/818 of the European Parliament and of the Council (hereinafter called “the Creative Europe Regulation”);

WHEREAS pursuant to Article 9(2) of the Creative Europe Regulation, which concerns the association of third countries, the specific terms and conditions of the association should be determined by an international agreement between the Union and the Associated Country;

---

<sup>1</sup> OJ L 174, 13.6.2014, p. 3.



